Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2020թ. դեկտեմբերի 25-ի նիստի թիվ 48/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

(2021 թվականի դեկտբերի 29-ին կայացած ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի թիվ 56/3 որոշմամբ կատարված փոփոխություններով)

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է գիտական գործունեության համար «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) բյուջետային միջոցներից ֆինանսավորվող գիտական դրամաշնորհների ստացման մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման ընթացակարգը:

1.2. Դրամաշնորհները Մասնաճյուղի գիտական գործունեության ֆինանսավորման ձևերից են և ծառայում են որպես Մասնաճյուղի ժամանակավոր ստեղծագործական կոլեկտիվների, գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծման ու առանձին դասախոս-գիտնական աշխատակիցների և ուսանողների գիտական հետազոտությունների աջակցության միջոց:

1.3. Դրամաշնորհների նպատակներն ու խնդիրները՝

- հիմնարար և կիրառական գիտելիքները զարգացնելու ունակ գիտամանկավարժական աշխատողների լիարժեք ներգրավումը գիտական գործունեության մեջ,
- լիարժեք և արդյունավետ կիրառել գիտահետազոտական աշխատանքների արդյունքները կրթական և Մասնաճյուղի գիտական ներուժի մեծացման

հիմնախնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների մշակման գործընթացներում,

- արդյունավետ աջակցել գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, ուսումնագիտական խմբերի ձևավորմանը և պրոֆեսորադասախոսական կազմի գիտական որակավորման բարձրացմանը,
- ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում,
- Մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների կողմից ներկայացվող հայտերի նախապատրաստման փորձի կուտակումը արտաքին մրցույթներին մասնակցելու համար:

2. Դրամաշնորհների մրցույթի կազմակերպումը

2.1. Դրամաշնորհների մրցույթը հայտարարվում է Մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ յուրաքանչյուր տարի:

2.2. Ֆինանսավորման քանակը և ծավալները որոշվում են գիտական խորհրդի որոշմամբ յուրաքանչյուր տարի՝ Մասնաճյուղի զարգացման որոշակի փուլում՝ նրա գերակայություններին համապատասխան:

2.3. Մրցույթին մասնակցող սուբյեկտներն են՝

ա) գիտությունների դոկտորի ղեկավարությամբ գիտական կոլեկտիվի կողմից կատարվող գիտահետազոտական նախագծի[1] ֆինանսավորման ստացման հայտը (կատարվում է ինչպես գիտնականների ստեղծագործական կոլեկտիվի կողմից, այնպես էլ միանձնյա).

բ) գիտությունների թեկնածուի ղեկավարությամբ կատարվող գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտը (կատարվում է ինչպես գիտնականների ստեղծագործական կոլեկտիվի կողմից, այնպես էլ միանձնյա),

[1] Գիտահետազոտական նախագիծը մեկ կամ մի քանի ուղղությունների շրջանակներում գիտական և ուսումնական բնույթի հետազոտական աշխատանքի համալիր է՝ կրթական, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև արդյունքների առևտրայնացման գործընթացում հետագա ներդրման նպատակով:

գ) երիտասարդ գիտնականի ղեկավարությամբ կատարվող գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտ (կատարվում է ինչպես գիտնականների ստեղծագործական կոլեկտիվի կողմից, այնպես էլ միանձնյա, մինչև 35 տարեկան),

դ) ուսանողական գիտահետազոտական նախագծի ֆինանսավորման ստացման հայտ,

ե) գիտահետազոտական նախագծի կատարման համար գիտաուսումնական խումբ[2] ստեղծելու հայտ.

զ) գիտահետազոտական նախագծի կատարման համար գիտաուսումնական (գիտահետազոտական) լաբորատորիա[3] ստեղծելու հայտ.

2.4. Մրցույթի հայտերը պետք է նախապատրաստվեն սույն կարգի համաձայն և ներկայացվեն մրցույթ հայտարարելու մասին Մասնաճյուղի գիտական խորհրդի որոշման մեջ նշված կարգով և ժամկետներում:

2.5. Մրցույթի հայտերը պարունակում են / Հավելված 2/.

1) Տեղեկատվություն ծրագրի մասին,
2) Ծրագրի պատասխանատուների կոնտակտային տվյալները,
3) Ծրագրի ազդեցությունը ԵՊՀ ԻՄ-ի կամ Տավուշի մարզի գործունեության վրա, ծրագրի շարունակականությունը,
4) Արդյունքները, դրանց տարածումը և կիրառումը ԵՊՀ Իմ-ում կամ տարածաշրջանում,
5) Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը ծրագրերի շրջանակում,

---

[2] Գիտաուսումնական խումբը ուսանողներից, երիտասարդ դասախոսներից կամ գիտաշխատողներից կազմված կատարողների կոլեկտիվ է, որը ղեկավարում է գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող դասախոսը կամ գիտաշխատողը (ԵՊՀ ԻՄ-ի հիմնական հաստիքային աշխատող): Առանձին դեպքերում գիտաուսումնական խումբը կարող է ստեղծվել տնօրենի հրամանով՝ առանց մրցույթ հայտարարելու:

[3] Գիտաուսումնական (գիտահետազոտական) լաբորատորիան ակադեմիական տարատեսակ հետազոտություններով զբաղվող պրոֆեսորադասախոսական կազմից, գիտաշխատողներից, ուսանողներից կազմված կոլեկտիվ է, որոնց ստեղծման հիմքը կոլեկտիվ նախագծերի իրականացման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է: Գիտաուսումնական լաբորատորիաները կառուցվում են հորիզոնական համագործակցության սկզբունքներով և դառնում են ակադեմիական միջավայրի աճի հիմքը: Առանձին դեպքերում գիտաուսումնական (գիտահետազոտական) լաբորատորիաներ կարող են ստեղծվել տնօրենի հրամանով՝ առանց մրցույթ հայտարարելու:

6) Հրավիրված մասնագետների, փորձագետների և ուսուցանողների ցուցակը (եթե կան),
7) Ծրագրի արդյունքները:

2.6. Փորձագետի կողմից տրվող հայտերի գնահատման չափանիշներն են՝

- հետազոտության հայտարարված թեմայի արդիականությունը,
- հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը,
- ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը,
- հայտի պատրաստման որակը. շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ըստ բովանդակության՝ ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը,
- հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտապահությունը:

3. Մրցութային հանձնաժողով

3.1. Նախքան մրցույթի հայտարարումը՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը կազմավորում է դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ առնվազն 6 անդամից բաղկացած մրցութային հանձնաժողով: Հանձնաժողովում ընդգրկվում են յուրաքանչյուր ֆակուլտետից մեկական անդամ, որոնց առաջարկում են ֆակուլտետների գիտական խորհուրդները գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսական կազմից: Տնօրենի համապատասխան հանձնարարականով՝ ֆակուլտետների դեկանները գիտական խորհուրդների հաստատմանն են ներկայացնում հանձնաժողովի մեկական անդամի՝ յուրաքանչյուր ֆակուլտետից: Այնուհետև, ֆակուլտետների գիտական խորհուրդների համապատասխան որոշումը դեկանները ներկայացնում են տնօրենին, ով, իր հերթին, ստորագրում է հանձնաժողովի կազմավորման մասին հրամանը: Հանձնաժողովի կազմավորման մասին տնօրենի հրամանով նշանակվում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավարն է, իսկ քարտուղարը՝ «Տավուշ» հետազոտական կենտրոնի մասնագետը:

3.2. Հանձնաժողովը՝

- կազմակերպում է հայտերի ընդունումը և ստուգում է դրանց համապատասխանությունը մրցույթի պայմաններին,
- սահմանված ժամկետներում կազմակերպում է նախագծերի փորձաքննությունը ոլորտի ճանաչում ունեցող մասնագետների կողմից,
- իր նիստերում ուսումնասիրում և քննարկում է փորձագետների եզրակացությունները և երաշխավորությունները,
- փորձաքննության արդյունքների հիման վրա հաստատում է մրցույթին թույլատրված նախագծերի ցանկը,
- քվեարկությամբ տալիս է դրամաշնորհներ շնորհելու մասին եզրակացություն, որը ներկայացնվում է գիտական խորհրդում:

3.3. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, կոլեգիալության սկզբունքով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

3.4. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից: Արձանագրությունը պարտադիր կարգով ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ինչպես նաև նիստին ներկա անդամները (առցանց կազմակերպված նիստերի դեպքում հանձնաժողովի անդամները կարող են ստորագրել նաև էլեկտրոնային եղանակով):

3.5. Արտահերթ նիստը հրավիրում է քարտուղարը՝ նախագահի կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում և օրակարգով: Քարտուղարն արտահերթ նիստ հրավիրելու, դրա օրակարգի, ժամկետի ու անցկացման վայրի մասին նիստից առնվազն 3

աշխատանքային օր առաջ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղյակ է պահում հանձնաժողովի անդամներին:

3.6. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) Հանձնաժողովի նախագահի հետ միասին պատասխանատու է հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար,

բ) հանձնաժողովին է ներկայացնում նրա կողմից հաստատման ենթակա փաստաթղթերի նախագծերը,

գ) հանձնաժողովի անդամներին և մրցույթի մասնակիցներին ԵՊՀ ԻՄ-ի անունից՝ կից գրությամբ ուղարկում (տրամադրում) է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը՝ այդպիսի պահանջ ստանալու օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում,

դ) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը, իսկ հանձնաժողովի գործունեության դադարեցումից հետո հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանման և սահմանված կարգով արխիվացման նպատակով ապահովում է այդ փաստաթղթերի հանձնումը ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին,

դ) իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

3.7. Հանձնաժողովի առաջին նիստը գումարվում է հանձնաժողովի ձևավորման մասին տնօրենի հրամանի հրապարակումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, որում՝

ա) հաստատվում է հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը.

բ) հաստատվում են մրցույթի հրավերի և հայտարարության տեքստերը.

գ) հաստատվում են հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը:

3.8. Հանձնաժողովի առաջին նիստի օրը քարտուղարը հանձնաժողովի կողմից հաստատված մրցույթի մասին հայտարարության և հրավերի տեքստերը ներկայացնում է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման /այսուհետև՝ ԱԿԻԱ/ բաժին՝ այն 10-օրյա ժամկետում հրապարակելու նպատակով:

4. Մրցույթի մասնակիցներին, նախագծերին և հայտերին ներկայացվող պահանջները

4.1. Դրամաշնորհների մրցույթին կարող են ներկայացվել կոլեկտիվ կամ անհատական հայտեր, որոնք պատրաստվել են ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցների կողմից՝ պայմանով, որ ղեկավարը և նախագծի ենթադրվող բոլոր կատարողների առնվազն 50 տոկոսը լինեն ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցները կամ ուսանողները:

4.2. Յուրաքանչյուր նախագծում կարող է լինել մեկ ղեկավար: Նույն անձը մյուս հայտերում չի կարող հանդես գալ որպես ղեկավար կամ կատարող:

4.3. Մրցույթին չի կարող ներկայացվել նախագծի հայտ, որի աշխատանքների կատարումն արդեն ֆինանսավորվում է (լրիվ կամ մասնակի) այլ նախագծի շրջանակներում ֆինանսավորման արտաքին աղբյուրից (բյուջետային կամ արտաբյուջետային):

4.4. Հայտը ներկայացվում է «Տավուշ» հետազոտական կենտրոն, որի կողմից այն ընդունվում է մինչև դրա համար մրցույթի մասին հայտարարությամբ սահմանված ժամկետի ավարտը: Հայտերը գրանցվում են առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը: Կենտրոնը մասնակցին տալիս է հայտն ընդունելու մասին տեղեկանք: Սահմանված կարգի պահանջներին չհամապատասխանող հայտերը, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում դրանք ներկայացնողներին:

5. Դրամաշնորհների տրամադրման մրցույթի անցկացման և ամփոփման կարգ

5.1. Մրցույթի հրավերը պետք է պարունակի՝

ա) մրցույթը հայտարարած մարմնի անվանումը,

բ) մրցույթի մասնակիցներից պահանջվող որակավորման տվյալների չափանիշները,

գ) դրամաշնորհի տրամադրման հիմնական պայմանները,

դ) հայտը ներկայացնելու պայմանները՝ ներառյալ ձևը, տեղը, ժամկետը, հայտի լեզուն,

ե) այն եղանակները, որոնցով մասնակիցները կարող են պահանջել մրցույթի փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ,

զ) հայտերի բացման օրը և ժամը, քննարկման կարգը և հայտերի փորձաքննության կազմակերպման կարգը,

է) փորձագետի կողմից տրվող՝ հայտերի գնահատման չափանիշները,

ը) դիմումի ձևը, տիտղոսաթերթը, նախագծի անոտացիան,

թ) ծախսերի նախահաշվի ձևը,

ժ) ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների ձևերը,

ի) կնքվելիք պայմանագրի նախագիծը,

լ) հայտերը նախապատրաստելուն և ներկայացնելուն վերաբերող այլ տեղեկատվություն՝ հանձնաժողովի հայեցողությամբ:

5.2.Մրցույթի հայտարարությունը և հրավերի փաթեթը հրապարակվում են ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջում:

5.3. Մասնակիցը կարող է հանձնաժողովից գրավոր պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում: Կենտրոնի կողմից պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու մասին գրությունը մուտքագրելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5.4. Հանձնաժողովի որոշմամբ մրցույթի հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք չեն կարող հանգեցնել մրցույթի հրավերի էական պայմանների փոփոխմանը: Հանձնաժողովի կողմից մրցույթի հրավերում փոփոխություններ կատարելու օրը քարտուղարն այդ փոփոխությունները ներկայացնում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին, ով այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրն ապահովում է դրա՝ ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջում հրապարակումը: Մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում հայտեր ներկայացնելու ժամկետի սկիզբը հաշվվում է այդ փոփոխությունների մասին կայքէջում հրապարակվելու օրվանից: Սույն կետի համաձայն՝ մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում ԵՊՀ ԻՄ-ը չի կրում մրցույթի հրավերում փոփոխություն

կատարվելու հանգամանքով պայմանավորված՝ մասնակցի կողմից կրած իրական վնասի ռիսկը:

5.5. Հայտը ներկայացվում է սոսնձված և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի հրավերում նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Մինչև մրցույթի հայտերի բացման նիստը քարտուղարին արգելվում է մրցույթին մասնակցության հայտեր ներկայացրած անձանց մասին այլ անձանց տեղեկություններ հաղորդելը:

5.6. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը: Հայտը փոփոխվում է սույն կարգով հայտ ներկայացնելու համար սահմանված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

5.7. Հայտերը բացվում են մրցույթի մասին հայտարարության մեջ նշված ժամկետը լրանալու օրը՝ հայտերի բացման նիստում: Մասնակիցը կարող է ներկա գտնվել հանձնաժողովի նիստի բաց մասին:

5.8. Հայտերի բացման նիստի առաջին (բաց) մասում՝

ա) նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստը նախագահողը, հայտարարում է նիստը բացված,

բ) քարտուղարը՝

- տեղեկատվություն է ներկայացնում հայտերի մասին,
- հանձնաժողովին է ներկայացնում մրցույթի հայտերը:

Ամեն մի հայտի ընդունման կամ մերժման վերաբերյալ հանձնաժողովն առանձին որոշում է ընդունում:

5.9. Հայտերի բացման նիստի երկրորդ՝ փակ մասում հանձնաժողովն ամեն մի հայտի համար հաստատում է ոչ պակաս քան 3 փորձագետի, ովքեր պետք է իրականացնեն փորձաքննությունը:

5.10. Հանձնաժողովի քարտուղարը 10 աշխատանքային օրվա ընթացքում փորձագետներին է տրամադրում հայտերի և գնահատման թերթիկների էլեկտրոնային տարբերակները:

5.11. Փորձագետները 10 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հրավերով սահմանված կարգով գնահատում են մրցույթի հայտերը և գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով հայտերի վերաբերյալ եզրակացություն են փոխանցում քարտուղարին՝ իրենց անձնական էլեկտրոնային հասցեից:

5.12. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում՝ փորձագետների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա: Հանձնաժողովն ընդունում է որոշում այն մասնակիցների ցանկը հաստատելու մասին, որոնց կարող է տրամադրվել դրամաշնորհ և այն մասնակիցների մասին, որոնց դրամաշնորհ տրամադրվել չի կարող:

5.13. Մրցույթը չկայացած է հայտարարվում, եթե՝

ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

բ) ոչ մի հայտ չի ներկայացվել.

գ) սույն կարգի 5.15. կետով նախատեսված դեպքերում ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը չի հաստատում հանձնաժողովի որոշումը:

5.14. Հանձնաժողովի որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահը սույն կարգի 5.12. կետում նշված հանձնաժողովի որոշումը ներկայացնում է Մասնաճյուղի տնօրենին՝ հաստատման:

5.15. ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը սույն կարգի 5.14. կետում նշված որոշումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է այն:

5.16. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը, ելնելով թեմատիկ ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական–գործունեության յուրաքանչյուր մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Մասնաճյուղի տնօրենը հաստատում է գիտական թեմաների ու

դրանց ղեկավարների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսական միջոցների չափը:

5.17. Մրցույթի արդյունքները հրապարակվում են ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջում՝ մրցույթի հաղթողների հաստատումից հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5.18. Մրցույթին ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում: Մրցույթին ներկայացված հայտերի նյութերը պահպանվում են ԵՊՀ ԻՄ-ում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հավելված 1

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի

Իջևանի մասնաճյուղի տնօրեն

պ-ն _____

ԵՊՀ ԻՄ-ի_____ _____

_____ ամբիոնի

_____ ից

(անուն հայրանուն, ազգանուն)

_____

(էլ. հասցե)

_____

(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Ձեզ է ներկայացվում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու «_____ _____»

վերնագրով նախագիծը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 202__ թ.

Հավելված 2

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 202__ թ. Ծածկագիր՝ _____

(լրացվում է «Տավուշ» հետազոտական կենտրոնի կողմից)

Հավելված 3

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

   – վերնագիրը _____

2. Հուշող (բանալի) բառեր _____

3. Խմբի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը _____

4. Ծննդյան տարեթիվը			
5. Գիտական աստիճանը		6. Պաշտոնը	
7. Հեռախոսահամարը		8. Էլեկտրոնային հասցեն	

9. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը		10. Խմբի (ներառյալ՝ ղեկավարը) անդամների թիվը	
11. Հայցվող ընդհանուր գումարը (հազար դրամ)			

12. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 202— թ. Կ.Տ.

Հավելված 4

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ[4]

[4] Համառոտ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները:

- Ներկայացնել մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և օգտագործված գրականության ցանկը:
  - Մինչև 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, օրացուցային պլանը (մինչև մեկ տարի տևողությամբ հայտերի դեպքում ըստ կիսամյակների, իսկ մինչև վեց ամիս տևողությամբ հայտերի դեպքում՝ ըստ եռամսյակների), իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները:
  - Մինչև 2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները:

Հավելված 5

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ազգանունը, անունը, հայրանունը	*հայերեն*	
	ռուսերեն	
	անգլերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)		
Անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված		
Հանրային ծառայությունների համարանիշը		
Հեռախոսահամարը (աշխատանքային, տան, բջջային)		
Էլեկտրոնային հասցեն		
Գիտական աստիճանը և կոչումը		
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը		
Հրատարակված – գիտական հոդվածների թիվը – մենագրությունների թիվը		
Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)		
1. 2. …		

«____» _____ 202— թ. _____

(ղեկավարի ստորագրությունը)

Հավելված 6

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Ազգանունը, անունը, հայրանունը	*հայերեն*	
	ռուսերեն	
	անգլերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)		
Անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված		
Հանրային ծառայությունների համարանիշը		
Գիտական աստիճանը, կոչումը		
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Աշխատանքի վայրը, պաշտոնը		
Հեռախոսահամարը (աշխատանքային, տան, բջջային)		
Էլեկտրոնային հասցեն		
Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)		
1. 2. …		

Հավելված 7

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի վերնագիրը _____

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ)									
	202— թ. (— ամիս)			202— թ.			202— թ. (— ամիս)		
Ազգանուն, անուն, հայրանուն	Անվանական	Ամիսների քանակը	Դահանջ-վող գումարը	Անվանական	Ամիսների քանակը	Դահանջ-վող գումարը	Անվանական	Ամիսների քանակը	Դահանջ-վող գումարը
1)									
2)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)	202— թ.	202— թ.	202— թ.
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
3. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			

Խմբի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Հավելված 8

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ[5]

[5] Երկուսից երեք պարբերությամբ ներկայացրեք ծրագրի ազդեցությունը մարզի զարգացման վրա, ծրագրի արդյունքների կիրառական նշանակությունը և ծրագրի շարունակականությունը:

Հավելված 9

Հայտերի փորձաքննության կազմակերպումը

1.1. Մրցութային մասնակիցներին որոշելու մասին արձանագրության հաստատումից հետո ԵՊՀ ԻՄ-ի հետազոտական կենտրոնն անցկացնում է նյութերի փորձաքննություն՝ ըստ տվյալ դրամաշնորհի համար սահմանված չափանիշների: Այնուհետև, 20 օրացուցային օրվա ընթացքում իրականացվում է գիտական փորձաքննություն:

1.2. Գիտական փորձաքննության խնդիրը հայտարարված գիտահետազոտական աշխատանքի գիտական, գիտատեխնիկական և գործնական արժեքի գնահատումն է: Անհրաժեշտության դեպքում հետազոտական կենտրոնը փորձաքննության համար կարող է ներգրավել անկախ փորձագետի (ով այն ստորաբաժանման աշխատակիցը չէ, որտեղ աշխատում է հայտատուն):

1.3. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երեք արտաքին փորձագետի կողմից: Որպես փորձագետներ ընտրվում են տվյալ ոլորտի մասնագետները: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը լրացնում է Մասնաճյուղի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին:

1.4. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտի հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը, ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը, հայտի պատրաստման որակը, հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը:

1.5. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

1.6. Փորձագետներն ու գիտական փորձաքննությունը կազմակերպող անձինք հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդում:

Հավելված 10

Հայտի գնահատման թերթիկ

Գնահատման չափանիշները	Թվային գնահատականը՝ միավորներով	Գնահատականը միավորներով			Փորձագետների միջին թվաբանական գնահատականը
		1 փորձագետ	2 փորձագետ	3 փորձագետ	
Ներկայացված հետազոտության թեմայի արդիականությունը	1-ից 30 միավոր				
Հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը	1-ից 30 միավոր				
Ֆինանսավորման հայցվող ծավալի հիմնավորվածությունը	1-ից 20 միավոր				
Հայտի պատրաստման որակը. շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ըստ բովանդակության՝ ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը	1-ից 10 միավոր				
Հայտի և կից փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը	1-ից 10 միավոր				
ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ					